ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՁԵՎ

Ես, **Թարո Ավետյանս**, Վայք համայնքի ղեկավար, լիազորված եմ համայնքի Ավագանու 24/05/2021թ. թիվ 18 որոշմամբ ստորագրել **Քաղաքապետերի դաշնագիրը հանուն կլիմայի և էներգիայի**՝ լիովին գիտակցելով Պարտավորությունների փաստաթղթում սահմանված և ստորև ամփոփված հանձնառությունները.

Հետևաբար,Վայք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը պարտավորվում է.

- Նվազեցնել CO_2 (և, հնարավորության դեպքում, ջերմոցային այլ գազերի) արտանետումները համայնքի տարածքում առնվազն 30%-ով մինչև 2030թ., մասնավորապես՝ էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ավելի լայնածավալ կիրառման միջոցով:
- Բարձրացնել համայնքի դիմակայունությունը կլիմայի փոփոխության հանդեպ՝ հարմարվողականության միջոցով:

Այս պարտավորությունները գործողությունների վերածելու նպատակով, **Վայք** համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը պարտավորվում է քայլ առ քայլ կիրառել հետևյալ մոտեցումները.

- Մշակել **Արտանետումների ելակետային կադաստր** և իրականացնել **Կլիմայի փոփոխության ռիսկերի և խոցելիության գնահատում:**
- Ներկայացնել **Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողությունների ծրագիր**՝ համայնքի Ավագանու վերը հիշատակված որոշման ընդունման օրից երկու տարվա ընթացքում, և ներառել **կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գաղափարները** համապատասխան քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում:
- **Ներկայացնել առաջընթացի հաշվետվություն** Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողության ծրագրի ներկայացման պահից սկսած առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ գնահատման, մոնիտորինգի և հավաստիացման նպատակով:
- **Կիսվել** մեր մոտեցումներով, արդյունքներով, փորձով և գիտելիքներով Եվրամիության սահմաններում և Եվրամիության սահմաններից դուրս գործընկեր տեղական և մարզային իշխանությունների հետ՝ ուղղակի համագործակցության և անաչառ գործընկերության միջոցով:

Ես ընդունում եմ, որ **Վայք** համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի մասնակցությունը տվյալ նախաձեռնությունում պետք է դադարեցվի (հիմք ընդունելով «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» ծրագրի գրասենյակի կողմից նախօրոք գրավոր տեղեկացումը)՝ վերը հիշատակված փաստաթղթերի (օրինակ՝ Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողության ծրագիր և Առաջընթացի հաշվետվության) սահմանված ժամկետներում չներկայացման դեպքում:

Վայքի համայնքապետարան, Վայոց ձորի մարզ, Վայք, Շահումյան փող., 18 շենք

Թարո Ավետյան, vayktown@mail.ru, +374 93 33 00 88

Ամսաթիվ _24/05/2021թ.

Թարո Ավետյան _____
ստորագրություն